

ՃԱՌՈՐ

Տարածութիւն . քառ . քիլոմէդր	.	.	402799
Բնակիչ	.	.	33,110825
Մուտք տարեկան	Ֆու .	.	328,911390
Ելք տարեկան	»	.	297,026333
Պարտք	»	.	743,134905

ՋԻՆ

Տարածութիւն . քառ . քիլոմէդր	.	.	10,290000
Բնակիչ	.	.	425,000090

ՊԱՐՄԿԱՍՏԱՆ

Տարածութիւն . քառ . քիլոմէդր	.	.	1,650000
Բնակիչ	.	.	6—7,000000

ԿԱՏՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԴԱՆԻՆ

ՄԵԾԱՇՈՒԹ ՎԵՋԻՐԻ ԻՄ ՄԱՀՄՈՒՏ ՆԵՏԻՄ ՓԱՇԱ

Քաղաքակրթեալ պետութեանց պարտքն է հասարակաց իրաւունքն ապահովելու նուիրել իրենց ջանքը։ Այս սկզբան պահպանութեանը ծառայող միջոցներն ուրիշ բանով ձեռք չեն կրնար բերուիլ, բայց եթէ արդարութիւնն ամենուն համար ճշդիւ և անխտրաբար գործադրելով, և վարչութիւնն ալ կանոնաւորապէս կազմաւորելով։ Անհատական շահերն երկրին բարեկարգութեամբն ու բարդաւաճմամբը միայն կրնան ապահովիլ, զի մասնական շահերն սերտ կապակցութիւն ունին հանրական շահուց հետ։

Ամենուն յայանի է արդէն, թէ Մեր գահակալութենէն 'ի վեր, Մեր կայսերական զիտաւորութեանց և զգացմանց առաջին առարկայն եղած է, Աստուծոյ օգնութեամբ, Մեր կայսրութեան մեծութիւնն ու փառքը, Մեր ամեն կարգի հպատակաց անդորրութիւնն ու բարեկեցութիւնն, և Մեր պետութեան երկիրնեւրուն հարուստութեանն ու բարգաւաճման համար պէտք եղած յառաջադիմութեան զարգացումը։ Մեր այս զիտաւորութիւններն աւելի կատարելապէս արդիւնաւորելու համար՝ որոշեցինք արտօնութիւններ շնորհել Մեր ամեն հպատակաց, և միանգամայն հասարակային վստահութիւնը լիովին ապահովող բարենորոգումներ հրատարակել։ Հետևաբար, Մեր այս կայսերական հրովարտակաւ կը հրամայենք որ հետեւեալ տնօրէնութիւններն 'ի գործ դրուին Ամենազօրին Աստուծոյ շնորհիւ։

Հասարակային իրաւանց ապահովութեան հիմն է, նախ, դատաստանական իշխանութեան պաշտօնին՝ գործադիր իշխանութեան միջամտութենէն կատարելապէս ազատ ըլլալն։ Երկրորդ՝ ու ե զեղծման դէմ օրինաց պաշտպանութիւնը։

Դատական ատեաններուն վրայ հասարակութեան վստահութիւնը գրաւելու համար, զանոնք սահմանելը միայն բաւական չէ, այլ պէտք է նաև որ այն ա-

տեաններուն անդամներն իրենց ստոյգ արժանեզնէն, անստղիւտ վարուքն և ուղղութեամբն, ինչպէս նաև արդարութեան և իրաւանց համաձայն գործերովն՝ հասարակաց համարմանն ու յարգանաց արժանի անձինք ըլլան :

Մեր Արդարութեան Բարձր Ատեանն՝ այս ամեն պայմաններն ու բարեմասնութիւններն իւր վրայ կեդրոնացնելու համար միայն հաստատուած է : Ուրեմն հարկ է սոյն խաբխիսներուն վրայ հիմնել նորա կազմութիւնն ու իրաւասական պաշտամունքը, և միանգամայն լուրջ բարւոքմունք մտցնել նորա պաշտամանց այլ և այլ մասերուն մէջ :

Ինչպէս որ դատական ատենից վարչական իշխանութեանն անկախութիւնը միայն կրնայ նոցա անկողմնակալութիւնն ապահովել, նոյնպէս դատաւորաց ալ (օրինաւոր պատճառաւ պաշտօնանկութիւնն ի բաց առեալ) անփոփոխելութիւնը միայն կրնայ զանոնք ամենայն վստահութեան արժանի ընել : Պէտք է ուրեմն դատաւորաց ընտրութիւնն այն կերպիւ ընել, որ ամենուն յարգն ու վստահութիւնը գրաւէ :

Քաղաքային և պատժական (շիջամիէ) ամեն ատեաններուն զլուին եղող Վճռալինի ատենի (Տիվանը թէմեիդ) նախագահին իրաւասութիւնները բաժնուած են Դատական նախարարութեան իրաւասութիւններէն, և այս ատենին երկու հատուածները մէկ Առաջին նախագահ և մէկ փոխ-նախագահ պիտի ունենան :

Միանգամայն Վերաքննութեան ատեանն (խաթինաֆ) և առևտրական դատարանները պիտի միանան Դատական նախարարութեան հետ. հետևաբար առևտրական նախարարութեան կը ծնայ վաճառականութեան, արուեստից և երկրագործութեան զարգացմանն ու յառաջդիմութեանը վերաբերեալ խնդրոց զբաղիլ : Այս նպատակաւ, Արդարութեան բարձր ատենին կապուած Վերաքննութեան ատեանն՝ առևտրական վերաքննիչ ատենին, ինչպէս նաև եղեռնադատ ատենին իրաւասութիւններն իւր վրայ պիտի միացնէ. հետևաբար, քաղաքային, պատժական և առևտրական գործոց յատկացեալ երեք դատարան պիտի ունենայ : Թէ՛ սոյն ատենին և թէ՛ Վճռալինի ատենին նախագահներն ու դատաւորները իրատիւ պիտի ընտրուին այն կերպիւ որ օրինաց պահանջած ամեն պայմաններն իրենց վրայ միացնեն :

Քաղաքային նախադատ ատեաններն ալ նոյն կերպիւ պիտի բարենորոգին ու սահմանադրին : Այս ամեն ատենից և դատարանաց անդամներն ամենամեծ ուշադրութեամբ պիտի ընտրուին, և իւրաքանչիւրին մէկ մէկ կայսերական Պէրաթ պիտի տրուի, որ առանց օրինաւոր պատճառի պաշտօնանկութենէ զանոնք ապահովէ : Միանգամայն յիշեալ անդամնց ծերութեան կամ անկարողութեան պատճառաւ պաշտօնէն քաղուելու և հանգստեան թոշակ ստանալու իրաւունքն որոշող կանոնադրութիւն մը պիտի շինուի :

Դատական գործոց կանոնաւոր և արդար տնօրէնութիւնն ապահովելու համար Արդարութեան բարձր ատեանն այսպէս վերակազմելով՝ քաղաքային պատժական և եղեռնական ամեն ատեանները միօրինակ կազմաւորութեամբ իրարու հետ կապելէ ետեւ, կ'ուզենք որ նոյն կանոնները գործադրին նաև դաւառաց մէջ հաստատեալ դատական ատեաններուն նկատմամբ, որոց պաշտօնն է իրաւունք ընել Մեր հպատակաց և ամեն տեղ արդարութեան օրէնքը թագաւորեցնել :

Այդ Ատեաններուն կազմութեան վրայ հասարակութեան կասկածի պատճառ մը չի՞ողու և իշխանութեան միջամտութենէն ու ազդեցութենէն զանոնք ազատ պահելու համար բացորոշ կերպիւ հետեւեալը կը հրամայենք .

Մեր ամեն հպատակներն արտօնութիւն ունին իրենք ընտրելու թէ՛ յիշեալ Ատեաններուն և թէ՛ գաւառային վարչական խորհրդոց անդամներն ու դատաւ.

ւորները, մահամէտական և ոչ-մահամէտական, ըստ այսմ որոշ հրահանգներ պիտի զրկուին տէրութեան ամեն գաւառներն՝ որպէս զի այդ ատեաններն ու խորհուրդներն հաստատուին և վերջ հրամայուած ձևին համեմատ կազմուին :

Գաւառագլուխները գտնուող Նայիպները՝ տեղւոյն վերաքննութեան ատենին նախադատութեան պաշտօնը պիտի վարեն . իսկ նահանգագլխոց և շրջանակագլխոց քաղաքային և եղեռնադատ ատեաններուն նախադատներն ամենէն ձեռնհաս անձանց մէջէ պիտի ընտրուին :

Նահանգագլխոց և շրջանակագլխոց Շէրրի ատեաններէն տրուած վճիռներուն Շէրրի նկատմամբ քննութիւնը գաւառագլխոց Նայիպներուն կը վերաբերի . եւ որովհետեւ դատական ատենից հաստատութեան գլխաւոր նպատակն իւրաքանչիւր անձի իրաւանց ապահովութեան երաշխաւորութիւնները կեդրոնացնել է, ուստի մեր Մահամէտական հպատակներուն՝ Քրիստոնեայ և ոչ-մահամէտական հպատակաց հետ ունեցած դատերն ինչպէս նաև մեր Քրիստոնեայ հպատակաց իրարու կամ այլ ոչ-մահամէտական կրօնքէ ելող հպատակաց հետ ունեցած դատերն, ինչպէս դարձեալ այս վերջիններուն իրարու հետ ունեցած դատերը՝ քաղաքային, պատժական և եղեռնական ատեաններուն պիտի յանձնուին : Յիշեալ ատեաններուն դատավարութեանը վերաբերեալ օրէնքներն ու կանոնները՝ մեր կայսերական հրամանագրերուն համեմատ պէտք է շուտով ամբողջականն ու գործադրին : Օրինաց հաւատարիմ պահպանութիւնը բռնութեան դէմ ապահովութիւն մ'է, հետևաբար Ատեաններուն անդուռ ուշադրութեանն առարկայ պէտք է ըլլայ :

Նմանապէս օրինաց տրամադրութեանց գործադրութիւնն, հաստատեալ ոճերին ծանրութեան համեմատութեամբ, լուրջ նկատողութեան պէտք է առնուի, որպէս զի ոչ ոք առանց դատաստանի բանտարկուի, և խոշտանգանքն ալ երբեք ներելի չըլլայ : Ասոր համար պէտք է հրատարակել թէ սոյն սկզբանց հակառակ վարուողները դատաստանի պիտի ենթարկուին, և օրինաց ամենայն խստութեամբ պիտի պատժուին, որպէս զի տրդարութեան բացարձակ յարգանքն ապահովի :

Մեր հպատակաց իրաւունքն երաշխաւորող հիմնական սկզբանց ամենակարևոր կէտերէն մին է պետութեան վճարելի հարկաց և տրոց բաշխման, ինչպէս նաև հաւաքման մէջ, ուղիղ համեմատութիւն մը հաստատել արդար եղանակաւ : Զչմարիտ է թէ Գանձուն ընդհանուր հասցիները՝ Տէրութեան վարչական և զինուորական ծախուց համեմատեալ են, և թէ այդ հասցիներն երկրին հարքստութեան և հասարակաց բարօրութեան հետցհետէ զարգացման հետ աստիճանաբար աւելցնելու միջոցները պէտք է փնտռել . բայց պէտք է նաև, և այս է Մեր կայսերական կամբը, հրաժարիլ այն հասցից ճիւղերէն՝ որք ժողովրդոց նեղակրութեան պատճառ մ'են՝ առանց կարևոր շահ մ'ընծայելու Գանձուն :

Մեր հպատակներուն վճարած ներքին տրոց և հանդանակութեանց զանազանութիւնը բաշխման և հաւաքման անկանոն վիճակ մը յառաջ բերելով, կը հրամայենք որ յիշեալ հարկերը միացնելու եղանակ մը գտնուի և անմիջապէս գործադրի, որպէս զի Մեր տէրութեան ժողովրդոց բեռը թեթեւայ՝ արդար համեմատութիւն մը հաստատելով, առանց Գանձուն օրինաւոր շահերն ալ վրտանդի մէջ ձգելու :

Տասանորդի տրոց վրայ յաւելեալ քառորդին ջնջումէն զատ, զոր Մեր ամեն հպատակաց բարեկեցութեան համար Մեր ունեցած կայսերական հոգածութեամբ անցեալներն հրամայեցինք, պէտք է տակաւին ամենազու միջոցներ ձեռք առնուլ և թոյլ չտալ որ տասանորդի տուրքը վարձակալաց միջնորդութեամբ հաւաքելու առթիւ բռնութիւններու անիրաւութիւններ գործուին,

միանգամայն թող չտալ որ թէ մեր երկրագործ ժողովրդոց և թէ Մեր կայսե-
րական գանձուն ֆնաս մը բերուի :

Եւ որովհետեւ Մեր հպատակաց ուղղապէս վճարած հարկերուն ալ հաւաքումն
որ յատուկ բնութիւն մը պէտք է ունենայ, գաւառաց մէջ Զապթիէներուն յանձ-
նուած է, և այս եղանակին ալ տալորէն ըլլալն հասկըցուած է, կը հրամայենք որ
ոստիկանութիւնն այսուհետեւ բնաւ յիսառնուի տրոց հաւաքման գործերու, այլ
մահմէտական և ոչ-մահմէտական ժողովուրդներէն ընտրեալ յատուկ հարկահա-
ւաքներ նշանակուին, որք յատկապէս պատրաստուելիք հրահանգաց համեմատ՝
հարկերն հաւաքեն: Մեր կայսերական հաստատուն կամքն այս ըլլալով՝ անյա-
պաղ 'ի գործ պիտի դրուի, որով թէ գանձուն իրաւունքն և թէ հարկաց հաւաք-
ման եղանակն երայխաւորի:

Մեր հպատակաց շահերուն վերաբերեալ խնդրոց մին ալ անշարժ ստացուա-
ծոց սեփականագրերը (հէօճէթ) բարենորոգելու խնդիրն է: Սեփականագրեր
տալու եղանակը մայրաքաղաքիս և գաւառաց մէջ տարբեր ըլլալով, շատ անգամ
ալ սեփականագիր բնաւ չգտնուելով, գատական ատեսաններուն վրայ բազում
աշխատութիւն կը ծանրանայ, զժուարութիւններ ու գատեր կը ծագին 'ի ֆնաս
ժողովրդոց, և անշարժ կալուածոց արժէքը կը կտրի: Այս անպատեհութեանց
վերջ տալու համար, ամեն կարգի անշարժ ստացուածոց սեփականագրերն այ-
սուհետեւ միայն Տէֆթէրհանէի ընդհանուր վերատեսչութեան կողմէ պիտի
տրուին: Ասոր համար կատարեալ հիմնագիր մը պիտի ներկայացուի որպէս զի
Մեր ամեն հպատակաց սեփականութեան իրաւունքն ապահովի:

Մեր հանապազօրեայ փափաքանաց համեմատ Մեր ամեն հպատակաց կեանքն,
ինչքն ու պատիւը պէտք է ապահովի: Հետեալաբար ոստիկանութեան զինուորներն
ամեն տեղերու բնակչաց վստահութիւնը վայելող պարկեշտ անձանց մէջէ պիտի
ընտրուին: Ասոնց պաշտօնին վերաբերեալ տնօրէնութիւններն անմիջապէս պի-
տի գործադրին, որպէս զի Մեր ամեն կարգի հպատակաց մէջ վստահութիւնն
ու ապահովութիւնն առաւել ևս հաստատուի:

Մեր տէրութեան մէջ քաղաքակրթութեան յառաջդիմութիւնը Մեր բաղձա-
նաց առաջինն ըլլալով, և ժողովրդեան մը հարստութիւնն ալ բարեկեցութեամբ
միայն կրնալով աճել, իշխանութեան պարտքն է Մեր հպատակներն ամեն բռնու-
թիւններէ ու զեղծմաներէ ազատ պահել, ինչպէս են ձրի ծառայեցնելու հարըս-
տահարական միջոցն, որ արդէն, իսպառ արդիւնալ է սկզբամբ, և որ ճամ-
բաներու, պողոտայներու և այլ հասարակաց օգտի վերաբերեալ շինութեանց
համար 'ի գործ կը դրուէր: շինութիւնը՝ որոց համար ժողովուրդը մեծ փոյթ և
հայրենասիրութիւն ցոյց կու տայ: Պէտք է ուրեմն զգուշանալ որ մեր հպատակ-
ներուն հասարակային շինութեանց համար մատակարարած նպաստն՝ անոնց
անձանց և շահուց հարստահարութեան և ֆնասու պատճառ մը չըլլայ: Հետեա-
լաբար ներկայ պակասաւոր դրութիւնը պիտի բարենորոգի և առաւել երայխա-
ւորութեամբ չըլապատի Որոշ և մանրամասն հրահանգներ պիտի տրուին վար-
չութեան պաշտօնատարաց, որպէս զի յարունակ հսկեն և ուշադիր ըլլան որ այս
մասին մեր կայսերական կամաց հսկառակ բան մը չկրնայ երբեք գործուիլ:

Նկատելով որ մեր Պետութիւն երկիրներուն մէջ երկրագործութիւնը, արուեստ-
ներն ու վաճառականութիւնը բարենորոգելու և զարգացնելու համար պէտք
եղած միջոցները ձեռք առնելու և մեր հպատակաց հարստութիւնն աւելցնելու
ստիպողական հարկ կայ: Նկատելով նաեւ որ Առեւտրական նախարարութեան
բուն պաշտօնը մեր այս դիտաւորութիւնն իրացնել պիտի ըլլայ, կը հրամայենք
որ այս նիւթերուն վրայ ձեռնհաս և կարող անձանց խորհուրդ հարցուի, և նոցա
որոշմունքն Մեր կայսերական վաւերացմանը ներկայացուին:

Մեր ամեն կարգի հպատակներն, որք մեր կայսերական պաշտպանութեան հովանւոյն ներքե կ'ապրին, կատարելապէս հաւասար են Մեր աշխին և Մեր արդարութեան զգացմանց առջև։ Ասոր համար կը հաստատենք Պատրիարքաց և այլ կրօնական գլխոց իշխանութիւնները՝ զորս կը վարեն իրենց հասարակութեանց գործերուն համար, ինչպէս նաև իրենց կրօնից ազատ պաշտաման համար, յիշեալ հասարակութեանց ունեցած արտօնութեանց և ազատութեանց համաձայն։ Այս ամեն գործերն որք յիշեալ հոգեւոր գլխոց իշխանութեան, անոնց պիտոյից և անոնց յատուկ խորհրդոց ձեռնհասութեանք կը պատկանին, այսուհետև ալ պիտի շարունակեն իրենց շնորհուած իրաւանց և արտօնութեանց սահմանին մէջ Մեր բոլոր պաշտպանութեանն առարկայ ըլլայ, և ամեն դիւրութիւնք պիտի շնորհուին իրենց եկեղեցեաց, վարժարանաց և այլ ազգային հաստատութեանց հիմնարկութեանն և յինութեան համար։

Մեր ամեն կարգի հպատակներն իրենց արժանեաց և յալողակութեան համեմատ տէրութեան պաշտամանից հասնելու և աստիճաններ ստանալու ազատութիւն ունենալով միշտ, Մեր ոչ—մահմետական հպատակներուն այդ պաշտամանց մէջ ընդունուիլը կը հաստատենք, երբոր անոնց ուղղութիւնն ու յալողակութիւնը ճանցուած ըլլայ։

Չհետևողական ծառայութեան ազատ մնալու տուրքն, որում Մեր ոչ—մահմետական հպատակներն ենթադրեալ են, Մեր մահմետական հպատակաց վրայ պարտք դրուած զինուորական ծառայութեան փոխարինութիւն ըլլալու համար հաստատուած է։ Բայց որովհետև իրաւանց հաւասարութիւնը պարտուց ալ հաւասարութիւն կ'ենթադրէ, և ըստ որում տուրքը վճարողին տարիքն ու վիճակն արդար համեմատութեամբ 'ի հաշիւ չեն առնուած, և վերջապէս ոչ—մահմետական հասարակութեանց մէջ սոյն տրոց բաշխումն ու հաւաքումն արդար ու կաշնոնաւոր հսկողութեան մ'ենթարկեալ չէ, կը հրամայենք, իրրև նոր նշան Մեր արդարութեան, որ յիշեալ տրոց բաշխումն այն կերպիւ ըլլայ, որ մեր ոչ—մահմետական հպատակներէն ամեն անոնք որ ղեռ քսան տարու եղած չեն կամ քառասուն տարին անցած են, ինչպէս նաև հիւանդներն ու անկարներն ազատ մնան այդ տուրքէն։ Ուշադրութիւն պէտք է ըլլայ, որ այդ հանգանակութիւնն անհատական բաժնի վրայ հաշուելու կանոնն այս տնօրէնութեամբ չաւրուի, այլ տուրքն հանգանակողաց ստոյգ թուոյն համեմատ հաւաքուի. և երբոր այդ թիւն աւելնայ, Գանձուն հասոյթն ալ նոյն յառաջատուութեան հետիւի։ Վերջապէս այդ տրոց հաւաքումը, նոյն իսկ հանգանակողաց խնամքը պիտի կատարուի վերը հրամայուած ձևով։ Այսպէս եղած ժամանակ, զինուորական ծառայութեանց ազատ մնալ ուղղող մահմետականաց համար որոշուած ներկայ մարդ գլուխ 100 լիրայի տուրքն ալ նոյն հաւասարական սկզբան համեմատ 50 լիրայի պիտի իջնէ։

Մեր տէրութեան երկիրներէն ոմանց մէջ Մեր ոչ—մահմետական հպատակները չեն կրնար կալուածատէր ըլլալ, և ազարակներու մէջ կը գործածուին։ Այս վիճակը Մեր արդարատէր զգացմանց հակառակ ըլլալով, այսուհետև բնաւ խտրութիւն չպիտի ըլլայ Մեր հպատակաց մէջ, թէ դատարկ մնացած և աճուրդով վաճառուած հողեր գնելու մասին, և թէ մասնաւորներէ վաճառեալ հողեր և այլ ինչքեր ստանալու մասին։ Հետևաբար հողային ստացուածոց վրայ հաստատեալ օրինաց արամադրութիւններն ամենակատարեալ հաւասարութեամբ վայելելու ապահովութիւն պիտի տրուի անոնց։

Գաւառաց մէջ բնակեալ Մեր ոչ—մահմետական հպատակաց կտակները պիտի յարգուին, և անչափահաս ժառանգաց (եւթիմ) ինչքերուն խնամակալաց (վասի) ձեռք մատակարարուելուն խառնուիլ ընաւ ներքի չպիտի ըլլայ։ Միայն

Թէ երբոր խնամակալաց և կտակակատարաց ղէմ յոռի մատակարարութեան զանգատ ըլլայ, այն ժամանակ իշխանութիւնը պիտի միջամտէ և անչափահասներու ընչից մատակարարութիւնն իւր հսկողութեան ներքև առնուի :

Մեր կայսերական կաճէն բոլրած այս ամեն հրամանաց և արտօնութեանց գլխաւոր նպատակն է Մեր վեհապետական իշխանութեան ներքև զտնուած ժողովրդոց բարեկեցութիւնն աւելցնելը Պետութեանց մեծութիւնն, փառքն ու ապահովութիւնն չեն կրնար ուրիշ բանով հաստատ մնալ, բայց եթէ գործադիր իշխանութեանց ուղղութեամբն ու արդարութեամբ, հաստատեալ օրինաց ընդհանուր հնազանդութեամբ և իւրաքանչիւրին իրաւանց և յատկութեանց թէ մեծաց և թէ փոքունց կողմէ կատարեալ պահպանութեամբ, Ամեն անոնը որ մեր տէրութեան երկիրներուն մէջ այն սկզբանց համեմատ վարուին, Մեր կայսերական շնորհաց արժանի պիտի ըլլան. իսկ անոնը որ հակառակ վարուին, արդար պատժոց պիտի ենթարկին: Ուստի կը հրամայենք որ Մեր վաւերացման ներկայացեալ կանոն մը հաստատուի, որպէս զի Մեր վեհապետական հրամանաց հակառակ գործերն և այլ չարութիւնները նշանակելու համար ամեն տեղեկութիւնք և խնդրուածք մեզ ներկայացուին կատարեալ ապահովութեամբ:

Նմանապէս կը կամիմք որ օրինաց անթերի պահպանութիւնն ապահովելու համար ձեռք առնուած միջոցներէն զատ կանոններ ու հրահանգներ պատրաստուին վալիներու, Միւթէսարըֆներուն, Գայմագամներուն, և առ հասարակ ամեն պաշտօնատարաց իրաւասութեան սահմանները Մեր կայսերական հրամանաց համեմատ որոշելու համար: Վերջապէս կը կամիմք որ ամենէն հասկըցուի թէ սոյն հրովարտակալ Մեր շնորհած արտօնութիւններն ու շնորհները մի միայն անոնց համար են՝ որք իրենց հաւատարիմ և անկեղծ հպատակութեան պարտականութիւնը կը կատարեն. իսկ անոնը որ այս ճամբէն զուրս ելած են՝ բնականաբար զուրկ պիտի մնան այս շնորհներէն:

Արդ, դուք որ Մեր մեծաշուք Վէզիրն էք, Վեհապետական հրովարտակալ պիտի հրատարակէք պէտք եղած ձևով, թէ Մեր մայրաքաղաքին և թէ Մեր տէրութեան ամեն գաւառներուն մէջ, և պիտի հսկէք որ ասոր պարունակած տրամադրութիւնները ճշդիւ և շարունակաբար գործադրելու համար հարկ եղած ամեն միջոցները ձեռք առնուին:

Տուեալ է 13 Ձիզատէ է 1292 (30 նոյ. 1875):

(Ի յրազրաց Կոստանդնուպոլսի)

ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ԵՐԵՒԵՆԻ ԱՆՑԲ 1873 ՏԱՐԻՈՅՆ

ՅՈՒՆՈՒԱՐ

Քաղաքական հին տարին վերջացաւ յեզափոխութեամբ Սպանիոյ, ուր կատարուեց էին Բալիա զորավարին պետական հարուածը, Սերրանոյի կառավարութիւնը, որ արմատէն կտրել էր Գաղէլարի հոռատորական թռիչքը: Նոր տարին ալ պատանեակ մը ընծայեց Սպանիոյ, ութու-

տասնամեայ Ալփոնսոս՝ որդի Իզապելայ Թագուհւոյն, մինչդեռ յանգէտս կը պարապէր յուսումն յԱնգղիա:

Այս մանկահասակ Թագաւորը ճամբայ կ'ելլէ Մարսէլէն 7 յունուարի, կը հասնի Պարիզէլլոն 9 յունուարի, Պալենցհիւս 12 յունուարի, Մաթրիտ 14 յունուարի, ուր կը կատարէ փառաւոր մուտքը 15 յունուարի, և կը հռչակուի Թագաւոր Սպա-